## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

**1**(1168). ԵՐԿԻՆՔ ԵՎ ԱՍՏՂԵՐ

ա) էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Կյո̈մշի կաշին ծալվըմ չի,
Արագի քարերը հըմբարվըմ չի:

**2**(1169)

բ) Կյո̈մշի կաշին ծալվըմ չի,
Կետի ավազը հըմբա̈րվըմ չի,
Նա̈ ի՞նչն ա:

**3**(1170). ՃԱՆԱՊԱՐՀ

Մի թոփ կտոր ունեմ,
Չափըմ եմ, չափըմ՝ հատնըմ չի:

**4**(1171). ՔԱՄԻ

էն ի՞նչն ա, ի՞նչ,
Ունի ձայն,
Չունի մարմին,
Ուզեցի բռնեմ,
Դուրս եկավ ունայն:

**5**(1172). ԳԵՏ

Օրան-օրան շուռ ա կյա̈լի,
Պերան չունի կուլ ա տալի,
Ոտներ չունի ման ա կյա̈լի:

**6**(1173). ՍՏՎԵՐ

Քանի քյնըմ եմ,
Տեղ չեմ հասնըմ[1]:

[1] Սա օգտագործվում է և՛ որպես հանելուկ, և՛ որպես առած:

**7**(1174). ԱՆԹԵՂԱԾ ԿՐԱԿ

ա) էն ի՞նչն ա, ի՞նչ,
Քու մերը քըշերիանա վե կցավ,
Կարմիր բոխչեն ղաքին պա̈ց ըլավ:

**8**(1175)

բ) Ոտները՝ տափին,
Միրուքը՝ աստծըմը:

**9**(1176). ԳԻՆԻ

էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Կարմիր բուղեն
Տափի տակին կյո̈ռըմ ա:

**10**(1177). ՉԻԲՈՒԽ

Պուճուր թորեն՝
Շեխճով լիքը:

**11**(1178). ՆՈՒՌ

էն ի՞նչն ա, ինչը,
Պո̈ւճո̈ւր թորեն՝
Շեղճով լիգը:

**12**(1179). ԿԱՂԻՆ

էն ի՞նչն ա, ի՞նչ,
Պապը սարին,
Կյո̈ւշը կտարին:

**13**(1180). ՄՈՇ

էն ի՞նչն ա, ինչ,
Կանանչ հինեմ,

Կարմիր թել տամ,
Սև էլ կտրեմ:

**14**(1181). ՄՈՐԻ

Ես Լալազարն եմ,
Կանաչ խյարն եմ,
Կարմիր խնձ՚որն եմ,
Կանաչ խոտի հետ էլ խառն եմ:

**15**(1182). **ԵՂԻՆՋ**

Մի կլխանի,
Օխտը ըռխանի:

**16**(1183). **ՍԻՆԴՐԻԿ**

ա) Ինքը ինչքան մեծանըմ ա,
Պոզերը կըլխիցը մեծանըմ ա:

**17**(1184)

բ) Ես առանց ծախսի հ՚ասիլ եմ կյ՚ալի,
Անտառըմը վայրենի,
Իմ պոզերս կըլխիցս ա մեծանըմ,
Ես էլ որդի սուփրա ա տուս կյ՚ալի,
Կըլխին եմ նստած:

**18**(1185). ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

Էն ի՞նչն ա, ի՞նչը
Մի ծառ,
Ծառի վր՚ա՝ մի կալ,
Կալի վր՚ա՝ սև ցորենը փռած:

**19**(1186). **ՍՈՒՆԿ**

ա) Ա՛ դիլի-դիլի մի ոտնանի,
Որ տ՚ուս եկար, կելը քե կտանի:

**20**(1187)

բ) Թուրքի տղեն՝ ծ՚ըրըմը,
Փետը՝ ոռըմը:

**21**(1188). **ԿՈՎ**

ա) Չորս հատ ծիծ ունի,
Էրկու պոզ ունի,
Էրկու անգաճ ունի,
Մի պերան ունի,
Էրկու աչքն ունի,
Չորս ոտն ունի:

**22(1189)**

բ) Չորս կոխիչ
Չորս կախիչ,
Էրկու ծծիչ,
Էրկու խլշիչ,
Մի տմբտմբիչ:

**23**(1190). **ԱՅԾԻԿ**

Էն ի՞նչն ա, ի՞նչ,
Էրկու պոզանի,
Էրկու անգաճանի,
Էրկու աչքանի,
Մի պերանանի,
Չորս ոտնանի:

**24**(1191). **ԽՈԶ**

Չորս-չորս Լիկանց,
Տասէրկու Մելիքջանանց,
Չկա Յավթելիկանց:

**25**(1192). **ԴԴՈՒՄ**

Սերմեմ աճար,
Տյ՚ուս կյ՚ա պ՚անջ՚ար:
Շմալ բոյ քաշի,
Թոլ ըլի կոծոծ:

**26**(1193). ԿՐԻԱ

Ծ՚ու ածըմ ա, հավ չի,
Խոտ ա ուտըմ, կով չի:
Նա՚ ի՞նչն ա:

**27**(1194). **ՍԱՏԱՆԱ**

Էն ի՞նչն ա, ի՞նչ,
Օխտը հարգանի մի ղալա,
Ո՛չ ղմով ա, ո՛չ՝ քարով:
Միջին մի ածդահա՝ երկու պոզանի,
Ինքն էլ ժողովուրթի թշնամի,
Ինքն էլ ղալիցը տուս կյալիս,
Ղալեն հետևիցը կտանի:

**28**(1195). **ՄՈՒԿ**

Տափի տակին,
Գիրք պլոճիկ,
Ինչ որ քյըքնես,
Քեզ ռոճիկ:
Էտ ի՞նչն ա:

**29**(1196). **ՄԱՐԴ**

Երկու ոտնանի,
Մի տնանի:

**30**(1197). **ԹՈՌԸ՝ ՊԱՊԻ ԳՐԿՈՒՄ**

Կյուքիտ նստեմ,
Միրուքըտ քաղեմ:

**31**(1198). **ԱՉՔԵՐ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Ըստիանց քեզ
Յաշըմ եմ ես:

**32**(1199)

բ) Սև սալա, սիպտակ սալա,
Խաթունը միջին կպլպլա:

33(1200). **ՔԻԹ**

ա) Մի սնանի,
Էրկու տնանի:

**34**(1201)

բ) Մի կյում ունեմ
Մեչ տեղը՝ մի սին:

**35**(1202). **ՅԱՐՍԸ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՔԻԹԸ ՍՐԲԵԼ Է**

Կարմիր կովը վեր կացավ,
Պարկը տափովը տվուց:

**36**(1203). **ԲԵՐԱՆ ԵՎ ԱՏԱՄՆԵՐ**

Մի փոս՝
Խուշուրը լիքը:

**37**(1204). **ԲԵՐԱՆ ԵՎ ԼԵԶՈՒ**

Մի պտրիան
Թուրքի տղեն չիլկի ա տալի

**38**(1205). **ԱՏԱՄՆԵՐ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Մի պըտրիան
Պենձով լիգն ա:

**39**(1206)

բ) Պուճուր պըտրըհան՝
Խուշուրով լիգը:
Էտ ի՞նչն ա:

**40**(1207). **ՁԵՌՔ**

Մի ծառ,
Ծառի վրա՝ մի կալ,
Կալի վրա՝ հինգ ծառ:

**41**(1208). **ԿՆՈՋ ԿՈՒՐԾՔԸ**

Մի դաշտըմ՝
Երկու խմորի կունդ վեր ընգած:

**42**(1209). **ՄԱՏՆԵՐ ԵՎ ԵՂՈՒՆԳՆԵՐ**

Իմ հերանց տասը եզն ունեն,

Տան էլ՝ ղաշղա-ղաշղա:

**43**(1210). **ՄԱՏ ԵՎ ՄԱՏԱՆԻ**

Մսից՝ շամփուր,
Էրկաթից՝ խրոված, ի՞նչն ա:

**44**(1211). **ՈՏՔ ԵՎ ԳՈՒԼՊԱ**

Իմ տկլորը,
Քու պլտպլտուկը:

**45**(1212). **ՄԻՏՔ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Ըստեղ չոքեմ,
Քըռի ղրաղին ճո̈ւր խմեմ:

**46**(1213)

բ) Ըստեղ չոքեմ,
Երևան ճո̈ւր խմեմ:

**47**(1214). **ՄԵՂՐ**

ա) Անջուր ջաղաց,
Անկրակ բաղարճ:

**48**(1215)

բ) Անճո̈ւր ճաղաց,
Ըլանի պաղարճ:

**49**(1216). **ՏՐԵԽ**

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Տանեմ ման ածեմ,
Պիրեմ վեր ածեմ:

**50**(1217). **ԿՈՇԻԿ**

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Որ հագնըմ եմ, աշխար ա ման կյա̈լի,
Հանըմ եմ, ման չի կյա̈լի:

**51**(1218). **ԳՈՒԹԱՆ**

Մի ղուշ ա,
Տափին վեր էկած ղուշ ա,
Ութանասուն ոտն ունի,
Քառասուն էլ պոզ ունի,
Տա̈ ի՞նչ ղուշ ա[1]:

**52**(1219). **ՉՈՒԹԻ ՇՂԹԱ**

Ի՞նչ ա, ի՞նչ,
Որ վեր եմ ունըմ,
Լաց ա ըլըմ,
Վեր եմ տընըմ,
Տաց անըմ ա:

**53**(1220). **ՇԱԼ ԳՈՐԾԵԼՈՒ ՃՌՌՎԱՔԱՐ**[2]

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Մի տերտեր՝
Էրկու հացը ծոցըմը տըրած:

**54**(1221). **ՎԻԼՀԻՆՔ**[3], **ԹԵԼԻ ՖՈՋԻՐ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Ա՛ լա̈ր, լա̈ր, երգա̈ն լա̈ր,
Ճուխտ եղունիկ քյնա̈լ ու կյա̈լ:

**55**(1222)

բ) Վա՜զ, վա՜զ,
Կյոտիկ ունի հարիր կյա̈զ:
Էտ ի՞նչն ա:

**56**(1223). **ԱԾԵԼԻ**

Լա̈լ հըրամին յալն ըլավ,

---

[1] Սա աշուղական հանելուկ է, այսինքն՝ գութանին լծված է եղել 10 լուծ եզ (յուրաքանչյուր լուծը 2 եզ է)՝ ութսուն ոտք, քառասուն պոզ (ծանոթ. բանահավաքի):
[2] Ճըռռվաքար - նրա̈ մեջ էրկու գիլիկնի կա,- բացատրում է բանասացը:
[3] «Որ սիե վեր ենք տընըմ, թելը վրա տալի, թելը ֆոզիր են անըմ»,- բացատրում է բանասացը:
Վիլհինք կամ վիլհենք - փայտից պատրաստված գործիք, որի վրա փաթաթում են ճախարակի իլիկի վրայից հանած թելը (ծանոթ. բանահավաքի):

Անհամբարքը վեր արավ:
Էտ ի՞նչն ա:

**57**(1224). **ՍԱՆԴԵՐՔ**

ա) Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Շեքըմդ տընես,
Թաքերիտ անես:

**58**(1225)

բ) Աք տամ, մաք տամ,
Քյաքուլիցըտ ծիք տամ:

**59**(1226). **ՃԱԽԱՐԱԿ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Շունը հաչեց,
Դուդեն ուռավ:

**60**(1227)

բ) Ա՛ դուռի, դուռի, քաչալ դուռի,
Ո՛չ կերել ես, ո՛չ խմել ես,
Փորդ ուռել ա:

**61**(1228). **ԳՈՒԼՊԱ ԳՈՐԾԵԼՈՒ ՇՅՈՒՂԵՐ**

ա) Հինգ ախպեր իրար հետ կռիվ են անըմ:

**62**(1229)

բ) Հինգ ախպեր մի ծուրըմ կռիվ են տալի:

**63**(1230). **ԹԵԼ ՈՒ ԱՍԵՂ**

Լպստորեմ, ծակըտ կոխեմ:

**64**(1231). **ԵՐԿԱՆՔ**

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Մի ծուրըմ
Էրկու ախպեր կռիվ են անըմ

**65**(1232)

բ) Կարպետը փռեմ տակը,
Կոմբալը խրեմ ծակը:

**66**(1233)

գ) Երկու ախպեր մի դուշըմ,
Իրար հետ կռվըմ են:

**67**(1234). **ԵՐԿԱՆՔ ԵՎ ԿՈԹ**

Տափակը վեր քու տափկին,
Սները վեր քու ծակին:

**68**(1235). **ԵՐԿԱՆՔ ՈՒ ՁԱՎԱՐ**

Սալը սալին տընեմ,
Դըմբըռչակը ծեռիտ տընեմ;
Դըմբդըմբալա նի ածեմ,
Ղըռղըռալա տուս ածեմ:
Ի՞նչն ա:

**69**(1236). **ԽՆՈՑԻ ԵՎ ԿԱՐԱԳ**

ա) Մազաճըլըլանք, փետակլըլակ,
Բոզ ծիավոր, տեղին թաքավոր:

**70**(1237)

բ) Էն ի՞նչն ա,
Փետի կլըլակ,
Մազի ճլըլակ,
Տեղին հարսը,
Սիպտակ թաքավոր:

**71**(1238). **ՄԱՂ**

Պուճուր աստոծ,
Ծին ա կյալի:

**72**(1239). **ԵՌԱՑՈՂ ԹԵՅՆԻԿ**

Տերտերն եկավ քրտնած,
Ղաքինը տնգած:

**73**(1240). ԿՈՒԺ

Էն ի՞նչն ա, ի՞նչ,
Քու մերը քըշերով քըշերիանա վե կցավ,
Կարմիր բուղեն շալակն ըլավ:

**74**(1241). ԴՈԼՉԱ (ՋՐԱՄԱՆ)

Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Ըստի պուպուզ,
Ընդի պուպուզ,
Տըռան տակին չըգլագի:

**75**(1242). ԳԴԱԼ

Ալ կընգըղիկ, չալ կընգըղիկ,
Քանի պարցեմ, տանի:
Ի՞նչն ա:

**76**(1243). ճՐԱԳ

Երգար աղիք,
Պոչը՝ ծաղիկ:

**77**(1244). ՊԱՏՐՈՒՅԳ

Երգար աղիք,
Օերը՝ ծաղիկ:

**78**(1245). ԱՎԵԼ

ա) Էն ի՞նչն ա, ի՞նչը,
Ըստի պուպուզ,
Ընդի պուպուզ,
Տըռան տակին չըգլագի:

**79**(1246)

բ) Էստի չգլագի,
Էնդի չգլագի,
Տռան տակին չիգրիգի:

**80**(1247). ԿՇԵՌՔ

ա) Ակտամ, մակտամ,
Քարքլիկիցտ ծիք տամ:

**81**(1248)

բ) Աք տամ,
Բաք տամ,
Քյարքլիկիցըտ ծիք տամ:

**82**(1249)

գ) Ա՛լ տամ, պալ տամ,
Քյարքլիկիցըտ ծիք տամ:

**83**(1250). ՍԱՋ

ա) Էն ի՞նչն ա, ի՞նչ,
Օաքը ճուլըմ են,
ճուլն ուտըմ:

**84**(1251)

բ) Էն ի՞նչն ա՝
ճուլեմ, ճուլըտ ուտեմ:

**85**(1252). ԲՈՒԽԱՐԻ

Էն ի՞նչն ա,
Սև հավը՝ փորը պագ:

**86**(1253). ՎԱՌԱՐԱՆ

Էն ի՞նչն ա, ի՞նչ,
Իրեք պերան, չորս ոտը:

**87**(1254). ԿՈՂՊԵՔ

ա) Էն ի՞նչն ա, էն ի՞նչ,
Տըռան վրա սև շունը կծկված ա,
Ո՛նչ թողըմ ա նի մտնես,
Ո՛չ էլ խոսըմ ա:

**88**(1255)

բ) Ղաքիտ կաղնեմ,
Օակըտ խառնեմ:

**89**(1256). ՋՐԱՂԱՑ

էՆ ի՞նչն ա, ի՞նչը,
Քշերն էլ ա ուտըմ,
Ցիրեկն էլ, կշտանըմ չի,
Բայց պեռնիցը թոզ ու չանգ ա տՈւս կյալի:

**90**(1257). ԳԻՐՔ

ա) Սև սերմը,
Սիպտակ դաշտ:

**91**(1258)

բ) էՆ ի՞նչն ա, էՆ ի՞նչը,
Ասեմ՝ կասեմ,
Ասեմ՝ տասեմ,
Օխտը կեղ տու ինձ,
Որ ես քեզ ասեմ:

**92**(1259). ՄԱՏԻՏ ԵՎ ԳՐԻՉ

Ինքը քյնաց,
Ոտնատեղը մնաց:
էտ ի՞նչն ա:

**93**(1260). ՋՈՒՌՆԱ-ԴՀՈԼ

էՆ ի՞նչն ա, էՆ ի՞նչ,
Տանեմ հաղ անեմ,
Պիրեմ պատիցը կախ անեմ:

**94**(1261). ՍԱԶ

ա) էլին ընգա,
Բելին ընգա,
Տար ման ածա,
Պիր կախ արա:

**95**(1262)

բ) էՆ ի՞նչն ա, ի՞նչ,
Վեր եմ ունըմ՝ լաց ա ըլըմ,
Վեր եմ տըննըմ՝ տաղ ա անըմ:

**96**(1263). ՀՐԱՑԱՆ ԵՎ ԳՆԴԱԿ

ա) էՆ ի՞նչն ա, ի՞նչ,
Հորթը փախավ, կովը պըռանչեց:

**97**(1264)

բ) էրկաթա մեռել,
Փետա դուքա,
էտ ի՞նչ ա:

**98**(1265)

գ) էՆ ի՞նչն ա, ի՞նչ,
Հավը ծՈւն շպրտեց:

**99**(1266). ՄԵԾ ՊԱՍ ԵՎ ԶԱՏԻԿ

Երգան աղիք,
Ծերը՝ ծաղիկ: